

ՄԵՃԱՐԱՆԻ ԱՆՊԱՐ

DIRECTION DU JOURNAL
MEDJMOUA-T-AHBAR
65, Grand rue de Pera, Taksim, 65

ՍԵՐՈՒՆԻ ԶԵՆՈՒՆԻՔԻ ՄԵՃԻՐԻ 6 ԿԱՐԴԻՆ
Խոսքերի խոսք Դրու 60 35
Թարգմանի խոսք 85 45
Մեմբերի ԼԵՃԻՎԵՐԻ Խոսք 20 10

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԵՆՈՒՆԻՔԻ ԿԵՆՏՐՈՆԻ
ԿԵՆՏՐՈՆԻ ԶԵՆՈՒՆԻՔԻ
Կառավարի խոսք Կարգադրի խոսք :

مجموعة اخبار
بكاوغلى تقسيم جادى ٦٥

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՆՏՐՈՆ

(4627) Թիւնն չարտադրութիւնն

Ա.

1. Իւրաքանչիւր ժողովրդագրական և հոգաբարձու պէտք է աշխատի ոչ միայն խմբով, այլ նաեւ առանձին ծանփայ իրենց խնամոյց յանձնուած ժողովրդական անհատները, զիստաւ անոնց հոգեւորական վիճակը, թերութիւնները, խրատել, յոր-գործել և համոզել Ս. Խորհրդոց մերձեցման և քրիստոնէական ու է պարտուց կա-տարման :

2. Այս վախճանու է որ Ս. Եկեղեցին հրամայել է ժողովրդագրական ոյցելու-թիւնը, որով ժողովրդագրական և հոգա-բարձուն խոնձուրթեամբ և շրջապահու-թեամբ հարկ է որ գոնէ տարին անգամ մը այցելեն իրենց սահմանին մէջ գտնուած քրիստոնէները. մանաւանդ տղաքաները, որոնք ընդհանրապէս գուրկ են ամեն մի-թարութիւնէ և մարդկութեան ամենէն լքեալ մասը կը կազմեն, և այս վիճակին հետեւութեամբ շատերը կը մեծնան անգի-տակ աստուածային օրինաց և իրենց քրիս-տոնէական պարտուց :

3. Եւ որովհետեւ նոյն իսկ ժողովր-դագրական և հոգաբարձու կարելի է չէ ամեն մէկ անհատը միշտ ուղղակի ծանչ-նալ, կամ քանակ և յորդորել ըստ ամենայն մասանց, հետեւաբար իրենց այս ըսուա-րութեան դարման տանելու մտքը խորհե-ցանք հաստատել ընկերութիւն մը յանուն Անարաս Թորութեան Ս. Կոյս Աստուածա-ծինն : Այս ընկերութիւնը Մեր ամեն ժողո-վրդագրական մէջ մի և նոյնը ան-խափր և առանց ու է տարբերութեան, անալլալ կանոնադրութեամբ պիտի հաս-տատուի : Իւր նպատակը պարզապէս հո-գեւոր ըլլալով, ամեն անդամներուն, և անոնց միջոցաւ ըստ կարելոյն, ամեն հա-ւատացեալը զատ զատ հոգեւոր օգուտին, խորհրդոց մերձեցման և յաւիտեանական փրկութեան միջոցներուն գործադրութեա-նը պիտի նպաստէ, ամենուն մէջ հոգեւո-րական միութեան անխցելի կապ մը գոյա-ցնելով և զօրացնելով զիրենք իրարու փո-խադարձ օգնութեան, եղբայրական խրա-տու, սիրայորդոր համոզման և այլ ամեն կերպ բարեաց, զոր պէտք է բնածին բեր-մամբ արտադրել եղբայրական համախմ-բում մը յանուն Բրիտանիոյ որուն մէջ ան-պատճառ ինքն ալ ներկայ պիտի գտնուի, ըստ իւր անխալ աստուածային խոստման թէ՛ «Ուր ինքն երկու կամ երեք ժողով-եալ յանուն իմ, անդ եմ ես ի մէջ նոցա» : (Մատթ. Ժ. 20) :

4. Այս սիրոյ քրիստոսաստուոր զօդիւ միացած հաւատացեալք, ջանիւք, հրաւի-րանք և նախազանութեամբ ժողովրդա-պետի կամ Հոգաբարձուին, ամեն կիրակի յետ միջօրեի պիտի գումարուին եկեղեցւոյն մէջ, ուր ժողովրդագրական կանխապէս պատրաստած ծրագրին համաձայն հոգե-ւորական զբաղումներով, խրատարանու-թեամբ, քրիստոնէական վարդապետու-թեան մեկնութեամբ և այլն, գոնէ ժամու մը չափ պիտի զբաղին : Թէ ընկերաց և թէ ուրիշ հաւատացեալ ծանօթներու հո-գեւորական պարտականութեանց վրայ տեղեկութիւններ պիտի տրուին ժողովր-դագրական, որն որ ըստ պատշաճին պի-տի յանձնարարէ մէն միոյն հոգեւորական աստուածութիւնը կատարել ի նպատակ իրենց եղբարց և ծանօթից : Հիւանդ ընկերաց

այցելութիւնը ու միթարութիւնը ընկե-րութեան գլխաւոր պարտքերն մէկն է հիւանդին հոգեւոր պիտոյց կատարման պիտի աշխատին, և եթէ ընկերութեան անդամներէն մին ի Տէր ննջելու ըլլայ՝ ա-նոր յուղարկաւորութեան ներկայ պիտի գտնուին : Իւրաքանչիւր ընկեր թէպէտ պարտաւոր է ստեղծ մերձեցում Ապաշխա-րութեան և Գոհութեան Ս. Խորհրդոյ, սակայն աստուած մէջ անգամ մը, այսինքն Անարատ Գոհութեան օրը, ամեն ընկերները ի միասին պիտի մատչին Ս. Հաղորդութեան, ուր որ գտնուին :

Հրամայելով ժողովրդագրական ուր փու-թով ձեռնարկին իրենց եկեղեցւոյ մէջ հաստատելու այս հոգեւոր ընկերութիւնը, կը յանձնարարեմք միանգամայն, որ Մեր ի վեր անգոր ցոյց տուած կէտերը զրի առնելով և ծրագրել մը յօրինելով Մեզ ներկայացնեն, որպէս զի ըստ այնմ Մեր կրօնական ժողովոյ մէջ միօրինակ կանո-նադիր մը յօրինուի, որուն համաձայն պի-տի վարուի ընկերութիւնը ամեն կողմ, Եւ Աստուծոյ օգնելով կը յաւանք թէ օր ըստ օրէ զարգանայ այն և պատճառ ըլլալ ժողովրդեան շերտնաւորութեան յաւել-ման, անօրհակուն և Ս. Եկեղեցւոյն հետ-միացաներուն մերձեցման և հոգեւորա-կան միթարութեան և ի փրկութիւն հոգ-ւոց հաւատացեալք : Որուն համար պիտի ջանամք Մերովսան ի քաջախիւրութիւն և ի խրախոյս անդամակցաց ծրագրել նոյն ընկերութիւնը հոգեւորական պէտքն ա-ռանձնապէս ընկերութիւններով, ինչպէս են մասնական ու լիակատար ներդրութիւնք, քաջախիւրական ու խրախոյս ձեռնառու-թիւնք ու յորդորներ և այլն :

(Հարտադրելի)

ՔԱՆԻ ՄԵ ԼՈՒՍԱՐԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԿԱՆ

ՏՐԱԳՐԻՆ ԱՌԹԻՒ



Ա.

ՊՍՏԱՆԵՐԻ ԹԻ ՄԱՍՈՒՅՈՂ

Վերջապէս երեսփոխանական ժողովոյ վերջին նիստին մէջ եկաւ սա Կանոնա-գրութեան ծրագրին, որուն անհամբեր սպասող մ'էր ան : Նախապէս ազգի վի-ճաբանութեան մը ենթարկուեցաւ. այ-սինքն թէ սոյն ծրագրին պէտք է տարի տալ ու ժողովականաց բախուելով իրենց միջոց տալ՝ խորհրդածելու անոր յօդ-ուածներուն վրայ, եթէ ոչ ներկայ նիս-տէն սկսիլ վիճաբանութիւնը : Թեր ու զէմ վիճաբանութիւններէ վերջ 16 ձայնով ձե-ռամբարձ ընդունուեցաւ ներկայ նիստին մէջ իսկ սկսիլ վիճաբանութիւնը : Սխալ և կործանարար քայլ մըն էր այս, քանի որ կանոնագիր մը և մանաւանդ անոր նիմ-նական կէտեր չէին կրնար այդքան հապ-ճեպով վաւերացման ենթարկուիլ առանց կանխաւ մտածուելու, խորհուելու, խոր-հրդակցելու ու ուսումնասիրուելու : Գի-տենք թէ յաճախ բաւերը մեծ գեր կը խաղան և որչափ աւելի այսպիսի ծրա-գիրներու մէջ՝ որոնք տպագրւան Կանոնա-գրութեան հիմունքը պիտի կազմեն և ուր կէտ մը իսկ «հիլէլի չէրէլ» բերելով կըր-նայ տապալել ամբողջ յօդուածի մը արա-մագրութիւնը : Հոս Հ. Գաբրիէլ Մ. Վ. Մէնէլիշեան շատ լաւ կերպով պատշապա-

նեց իւր գաղափարն րեւելով թէ՛ Կանոնա-գրութեան ծրագրին Յանձնաժողովն 3-4 ամսուան մէջ կարողացաւ սոյն ծրագիրը կազմել այդ երբ իրեն այդքան երկայն ժա-մանակամիջոց մը արուած է, ինչո՞ւ պատշա-հ էր : Ժողովոյ գոնէ երկու շաբաթուան համար միջոց մը ուր իւրաքանչիւր երես-փոխան կարենայ մտածել, խորհիլ այդ յօդուածներուն կէտերուն վրայ և իւր կողմիցներն կարենայ ըստ այնմ յաւաք տանիլ : Եւ սակայն չիմ գիտել ինչ տա-րբինակութեամբ մերժուեցաւ այս, որուն վրայ վերջապէս ընդհանուր հաւանու-թիւն գոյացաւ թէ ներկայ վիճաբանու-թիւններն նպատակ ունենան պարզապէս խնդիրն ձեռնելու, գաղափարներն ամփո-փելու, առանց այդ յօդուածներն վաւեր նկատուելու :

Ու սկսաւ ասոր վրայ Կ-Պատրիարքի ընտրութեան առթիւ քահանայներուն ալ մասնակցութեան խնդիրն և ծագեցաւ այդ վիճակուն ու աշխարհական կղերիկ վե-ճերն, որոնք մեր Հայ-Կաթողիկէ հաւա-րակութեան յետադիմութեան մէջ մեծ կէտն կը կազմեն :

Առնենք աւելի վախճաններուն ալ տղ-գային գործերու միջամուկ ըլլալու իրա-ւասութեան վրայ պնդեց Հ. Գաբրիէլ Վ., իբր վիճակուն Միթարեան վանուց Միաբան, որուն զէմ խօսեցան ընտանա-բար Զմայուցին և Բրթախոնտացին : Ու-չաղբաւ Երեւոյթ մ'ուտած էր նոյն պահուն Անտանիաներու ձեռնադրութիւնը : (*)

Այս կէտին վրայ արդէն այս էջերուն մէջ վիճաբանութեան (**) մը սկսած էինք Գիւր. Հ. Գաբրիէլ Մ. Վ. Մէնէլիշեանի հետ, որուն շարունակութիւնը կը նկատուի սոյն յօդուածն :

«Մէնէլիշեան»-ի 4623 թուոյն մէջ Հ. Գաբրիէլի ուղղած թաց նամակն մինչեւ ցայսօր անպատասխան մնաց, թերեւս — ո՞ր գիտէ — զայնակուն պատճառաբանու-թիւններ, սխալ ուղղութիւններ և կամ իւր-րեւ իր նախկին աւակներէն տղայական ենթադրութիւններն նկատելով :

Արդ խնդիրն լուարանանք :

Խոսքս Հ. Գաբրիէլ Մ. Վ. ին է :

Ես ըսած եմ «Եղեցեք Ձեր դիրքը հան-դէպ Ձեր Միաբանութեան» : Եայնք և քննեք թէ քանի որ Դուք երեսփո-խան ինքզինքնիդ (այսինքն վանական-ներդ) թեկնածուներ կը նկատուէր ապագայ Կ-Պատրիարքութեան, իսկապէս ճշդա՞ծ էք զայն, այսինքն հոս Կ-Պոլիս գտնուե-լով Կ-Պատրիարքին իրաւասութեան ներ-քէմ էք, եթէ ոչ կը խուսափէք անկէ :

Դուք կը պնդէիք թէ հոս Կաթողիկոսա-կան իշխանութեան ներքեւ էք. իբր տեղ-ւոյն Եպիսկոպոսը Ձեր վրայ հոգեւորապէս հրամայելու իշխանութիւն ունի, առանց քնաւ ոտնձգութիւն ընելու Ձեր վանքին ներքին կեանքին որ Ձեզի միայն յատուկ է : Եթէ ասոր խուսափել չեն ըսեր, հապա ինչ անուն տալու է : Օրինակներով խօ-սինք :

Էնդարելի ծանօթ խնդիրն կարգադրե-լու համար երբ երկու եկեղեցական հա-ւիրակ զրկել հարկ դատեց Հոգեւոր Տէրը

(*) Անտանիան Միաբանութեան Հ. Եղիա Մ. Վ. Բիւճեան՝ այդ նիստին ար-դէն ներկայ էր :

(**) «Մէնէլիշեան»-ի 4621, 22, 23 :

և Ձեզի առաջարկեց այս պաշտօնը, ու Դուք եւս, յօժար կամօք ընդունեցիք այդ պաշտօնը, բայց նախապէս Ձեր Աբրահոյ Տեղապահէն հրաման առնե-լէն վերջ, որուն վրայ Կաթողիկոսը վի-չնեալ հեռագրեց ու հեռագրաւ պատառ-խանուեցաւ իրեն թէ արտօնեալ է Հ. Գաբրիէլ 15 օրուան համար Էնդարել եր-թով ու գործերն կարգադրել :

Դարձեալ ասկից առաջ երբ Ձեզի ա-ռաջարկուեցաւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Ուսումնարանի Տեսչութիւնը, Դուք իբր միաբան վանքի մը առանց հրամանի Աբ-րահոյ չէիք կրնար ստանձնել զայն ու այս անգամ ալ վիչնեալ շարունեց : Ուրեմն այս պարագաներուն մէջ ո՞ր կը մնայ ի-րաւասութեան խնդիրը : Երբ ես Ձեր իսկ անձին վրայ կը խօսեմ՝ չեմ կրնար մեղադ-րել զՁեզ անձնապէս, նոյնը պիտի ընէին Ձեր միաբանակից եղբայրներն ալ : Բայց քննեք սոյն երկու խնդիրներն, տարբար-ծենք զանոնք՝ ինչդիրն յատուկ լուսաբա-նութիւն ասուու համար :

Առաջին պարագայի մէջ Աբրահայր Վ-Պատրիարքին հեռագրաւ ըրած խնդիրքն կը կատարէ ոչ թէ կատարած ըլլալու հա-մար և կամ Հայ-Կաթողիկէներու Կ-Պատ-րիարքին ճոխութիւնը, իշխանութիւնը յորդելու նկատուածով, այլ այս միջոց մըն էր Ձեր վանքին համար իր շահերը պաշա-պանելու տեսակէտով և տեսակ մը բր-թական ամեն անոնց զէմ թէ՛ վանական-ներն եթէ ազգային գործերու միջամտեն, գիտեն կարգադրութիւններ ընել, և ինչ կը, որոնք ես զանց կ'առնեմ :

Իսկ երկրորդ պարագային մէջ ընտկու-նաբար և շատ որոշ բան մըն էր թէ պի-տի մերժել Ձեզի ուղղակի ազգին և կամ Կաթողիկոսին իրաւանց ներքեւ գտնուած վարժարանի մը տեսչութիւնը և կամ ու-սուցչութիւնը, քանի որ Ձեր վանքէն ալ ունի իրեն վարժարանը որ կը միջոց Լու-սաւորիչ Ուսումնարանին հետ և պարզա-պէս ճանաչ տեսակէտով չուղեց արտօնել Ձեզ այդ պաշտօնը, պատշաճելու համար իր վարժարանի գոյութիւնը : Արդ ուրեմն այդ տեսակ պարագաներուն մէջ Դուք ինչպէս ինքզինքնիդ զանցաւ կը ներկա-յացնէք պաշտօնի մը, որմէ կախուած չու-նիք Դուք, որուն իրաւանց ներքեւ էք ըստ (բայց ի հոգեւորական և այն ալ Կա-թողիկոսը իբր տեղւոյն Եպիսկոպոսը նկատելով) : Կ'աւարկէիք նաեւ թէ Կար-տինալ Կոթիկ վանական մըն էր : Այո՛, բայց այդ Կարտինալ Կոթիկի պատկանած վանքը Ս. Քահանայապետին իրաւանց ներքեւ է, մինչդեռ Դուք Հայ-Կաթողիկէ Կ-Պատրիարքին հաւանաբար պէտք մը չուենք, քանի որ իշխանութեան սահ-մաններէն դուրս կը կործէք ըլլալ և ինչ որ էք :

Եթէ Քահանայապետի ընտրութեան ժա-մանակ ազգայնականի խորութիւն չըլլայ, Դուք վանականները կրնայիք Կարտի-նալ ըլլալ և թեկնածու Քահանայապետու-թեան, բայց ըստ Կ-Պատրիարք Հայ-Կա-թողիկէ Հաւատարմութեան, որուն կ'ան-դամակցիք ի ծնէ, բայց անոր Գիւտուն ի-րաւասութեան կը խուսափիք : Եւստ ցա-ւալի կը գտնեմ Ձեր այն աւարկութիւնը թէ Կ-Պատրիարքին իրաւասութեան սահ-մանին չընթացէր դուրս է վանական և

Իսթամպուլ զսղէթառը տախի էր:

Պէտղիուհնա, Թագսիմ նաստահնէ Ն. 65